ԲԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԻ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԻՄԱՍՏԻ ԼԵԶՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՎԱՊԱՏԿԵՐԸ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

Էլ.հասցե՝ artashesmartirosyan@yandex.ru

DOI: 10.24234/scientific.v1i43.12

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում դեռևս վաղնջական ժամանակներից փիլիսոփաներին հուզող աշխարհի լեզվական պատկերի արտացոլմանն առնչվող այնպիսի հարցադրումների, ինչպիսիք են՝ աշխարհաճանաչման և իմացության գործընթացում ինչպիսի՞ հարաբերակցություն, «փոխգործակցություն» է առկա բառի և նշանակության միջև, որչա՞փ է նրանց «անկախության աստիճանը», բա՞ռն է օգնում է մտքերի ձևավորմանը, թե՞ նշանակությունը. ո՞րն է գերակայողը, կա՞ն արդյոք աշխարհի լեզվական պատկերի ձևավորման համար էական դերակատարություն ունեցող այլ բաղադրիչներ: Այս հարցադրումների համատեքստում հնարավորինս ամփոփ ներկայացվում են պատմության տարբեր շրջափուլերում համաշխարհային լեզվափիլիսոփայական առաջատար ուղղություններում առկա դրույթներն աշխարհի լեզվապատկերի կերտման գործընթացում բառային նշանի, նշանակության ու իմաստի փոխլրացնող դերակատարման վերաբերյալ: Հարցի արժեքը հանգում է այն հարցադրմանը, որ եթե *նշանակությունը* հաստատուն է բոլոր լեզուներում, և բառը որոշակի տեղեկույթի կրող է, ապա ո՞րն է լեզվից լեզու նույն հասկացության դիմաց բառիմաստի ձևավորման փոփոխակների առաջացման բնույթը՝ կապված տվյալ լեզվակիր հանրության աշխարհընկալման հետ: Գուցե այդ տարբերությունը պայմանավորված է տվյալ լեզվակիր հանրության կողմից՝ աշխարհը, այն է՝ արտալեզվական իրականությունը տարբեր կերպ մոդելավորելու իրողությա՞մբ, իսկ գուցե, ինչպես մատերալիստներն էին պնդում, նշանակությունն օբյեկտիվ իրականության

զանազան շերտերի հուզական արտացոլո՞ւմն է, իսկ գուցե այն գիտակցության ճշմարիտ ծնո՞ւնդն է, ինչպես պնդում էին իդեալիստները:

Այնուամենայնիվ, լեզվաբանական իմաստաբանության հիմնախնդիրը եղել և մնում է լեզվի միջոցով աշխարհի հասկացութավորումը բառ-նշանի միջոցով, որի միջուկային իմաստույթը համընդհանուր է՝ համազգային, իսկ ծայրամասայինները՝ բուն լեզվականը՝ ազգային:

Բանալի բառեր՝ նշան, նշանակություն, իմաստ, աշխարհի լեզվապատկեր, արտալեզվական իրականություն, ինտենսիոնալ և էքստենսիոնալ նշանակություն, նշում, նշանակցում, անփոփոխակ, աշխարհի հարակից պատկեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Երբ ես բառ եմ գործածում,- քամահրանքով ասաց Համպտի-Դամպտին,- նշանակում է, որ ես, ոչ ավել, ոչ պակաս, պատվիրում եմ նրան նշանակել:

- Հարցն այն է,- ասաց Ալիսան,- *կարո՞ղ եք արդյոք* Դուք ստիպել բառերին նշանակելու տարբեր առարկաներ:

- Հարցն այն է,- ասաց Համպտի-Դամպտին,- թե ո՛վ ո՛ւմ պիտի հրամայի, այսքանը կասեմ:

Այս երկխոսությանը վերցված է XIX դարի աշխարհահռչակ անգլիացի մանկագիր, մաթեմատիկոս, տրամաբան, փիլիսոփա Լյուիս Քերոլի «Ալիսան հայելիներից ներս» ստեղծագործությունից (1871 թ.), որտեղ հեքիաթի լեզվով արվում են հարցադրումներ, որոնք դարեր շարունակ հուզել են մեծագույն մտածողներին, մասնավորապես փիլիսոփաներին՝ հիմք հանդիսանալով աշխարհի լեզվապատկերում բառային *նշանի, նշանակության* և *իմաստի* մասին զանազան փիլիսոփայական մեկնաբանությունների: Իսկ վերջիններիս զանազանության հիմքում իրավացիորեն ծնվող այնպիսի հարցադրումներ են, ինչպես՝

- ✓ աշխարհաճանաչման և իմացության պրոցեսում ինչպիսի՞ հարաբերակցություն, «փոխգործակցություն» է առկա *բառի* և *նշանակության* միջև,
- ✓ որչա՞փ է նրանցից յուրաքանչյուրի «անկախության աստիճանը»,
- ✓ բա՞ռն է օգնում է մտքերի ձևավորմանը, թե՞ նշանակությունը,

✓ ո՞րն է գերակայողը. գուցե աշխարհի լեզվական պատկերի «ստեղծման» համար էական դերակատարություն ունեն նաև ա՞յլ բաղադրիչներ և այլն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության մեջ քննվող հասկացությունների (*բառային նշանի, նշանակության* և *իմաստի*) փոխհարաբերության և այդ համատեքստում աշխարհի լեզվական պատկերի կերտման հարցերն են, որոնց քննությունն առավել խորացել է հատկապես XIX դարում և ցայսօր ակտուալ են: Մեր առաջադիր խնդիրը եղել է վերլուծական-համեմատական մեթոդով հնարավորինս սեղմ ներկայացնել հարցի ուսումնասիրության պատմությունը եվրոպական և ամերիկյան, խորհրդային հայկական և ռուսական լեզվափիլիսոփայական առաջադեմ ուղղությունների կողմից՝ այս ամենը պրոյեկտելով լեզվից լեզու նույն հասկացության դիմաց բառ-նշանի նշանակցման «տարբերությունների» և լեզվի զարգացման պատմական տարբեր փուլերում բառի իմաստային կառուցվածքի փոփոխությունների հարցերին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դեռևս անտիկ մտածողները արժևորել են լեզվի և նրա մասնավոր դրսևորում հանդիսացող խոսքի դերը մարդու և աշխարհի փոխճանաչման հարցում: Դեռևս հին հնդիկները իրենց կրոնափիլիսոփայական տրակտատներում՝ «Ուպանիշադներում», փաստում էին, որ «….եթե չլիներ խոսքը, հայտնի չէին լինի ո՛չ բարին, ո՛չ չարը, ո՛չ ճշմարիտը և ո՛չ սուտը, ո՛չ բավարարվածությունը և ո՛չ հիասթափությունը: Խոսքն է հնարավոր դարձնում այս ամենի ըմբռնումը: Արժևորե՛ք խոսքը» (Булич С. 1890): Դարեր շարունակ աշխարհի մեծագույն մտածողներին՝ նախևառաջ փիլիսոփաներին հետաքրքրել է մի կարևոր հարց. իմացության, այն է՝ աշխարհի պատկերն ընկալելու պրոցեսում ինչպիսի՛ փոխհարաբերություն է ձևավորվում մտածողության և լեզվի միջև, որչա՛փ են *համընկնում* միտքը, որ աշխարհի առարկայական արտացոլումն է, և լեզուն, որ հանդես է գալիս բառերի, նախադասությունների տեսքով: Միտքն այս դեպքում առարկայական աշխարհի միջոցով ձևավորվող տրամաբանական տեղեկույթն է, իսկ լեզուն այն իմաստային շապիկը, որն ամփոփում է նրա հասկացական միջուկը: Աշխարհընկալման այս երկու կաղապարները՝ տրամաբանական և լեզվական պատկերները, ըստ

փիլիսոփաների, հիմնականում համընկնում են (Բրուտյան Գ., 1972): Բառի մեջ ներառված տեղեկույթը բովանդակային առումով հանդես է գալիս երկու կողմով՝ տրամաբանական և լեզվական նշանակությամբ: Տրամաբանականը ներկայանում է որպես բառի հասկացական միջուկ, լեզվականը բխում է տվյալ կոնկրետ լեզվի առանձնահատկություններից: Փաստորեն, եթե այդ համընկնումը ոչ լրիվ է, ոչ հայելային, ուրեմն մենք սահմանազատում ենք հասկացությունը և բառի առարկայական նշանակությունը: Այս առումով, ուշագրավ դիտարկում է անում XX դարի երկրորդ կեսի հայ մեծանուն փիլիսոփա Գևորգ Բրուտյանը. «Հանդես գալով որպես լեզվական կազմություն, լեզվական կառույց, բառային նշանակությունը կրում է տվյալ ժողովրդի լեզվի համակարգի և պատմության մշտական ազդեցությունը....Մինչդեռ հասկացությունը նշանակության անփոփոխակն է (ինվարիանտը), բառի (բառակապակցության) մեջ այն հաստատունը, որը կախված չէ լեզվի բառային նշանակությունից, իմաստային (սեմանտիկական) և ընդհանրապես լեզվական փոփոխակներից» (Բրուտյան Գ., 1972): Բառիմաստի պատմական զարգացման ընթացքում բառը, որպես կանոն, «կուտակում է» բառաիմաստային տարբերակների որոշակի ամբողջություն, ինչը ցուցիչ է բառի բառային նշանակության երկմիասնական բնույթի: Հարցի արժեքը հանգում է հետևյալին. եթե *նշանակությունը* հաստատուն է բոլոր լեզուներում, և բառը որոշակի տեղեկույթի կրող է, ապա ո՞րն է լեզվից լեզու նույն հասկացության դիմաց բառիմաստի ձևավորման փոփոխակների առաջացման բնույթը՝ կապված տվյալ լեզվակիր հանրության աշխարհընկալման հետ: «Մասնավոր նշանի ողջ չպատճառաբանվածության դեպքում որոշ կիրառելիություն ունեցող նշանների միջև առկա հարաբերությունները հարկ չէ դիտարկել չպայմանավորված: Լեզուները միայն առաջին հայացքից են միմյանցից տարբերվում նրանով, որ միևնույն առարկային տալիս են տարբեր անվանումներ: Նրանց միջև տարբերությունը միանգամայն այլ բնույթի է. դրանք վերլուծության տարբեր համակարգեր են. նրանք տարբեր կերպ են մոդելավորում արտալեզվական իրականությունը»,- փաստում է XX դարի հայ անվանի փիլիսոփա Լև Աբրահամյանը (Абрамян Л., 1965):

Նշանակությանը սպառիչ բնորոշում տալը եղել է փիլիսոփայական զանազան ուղղությունների առաջադիր խնդիրը: Այսպես, փիլիսոփայության

մատերիալիստական ուղղության ներկայացուցիչներն այն համարում էին օբյեկտիվ իրականության և դրա զանազան շերտերի հուզական արտացոլումը, իսկ իդեալիստների հայեցակերպով *նշանակությունը* գիտակցության ճշմարիտ ծնունդն է:

XIX դարի ամերիկյան փիլիսոփա Չ. Փիրսը առաջադրեց իրականության և ճանաչողության հարաբերակցման իր տեսությունը՝ այսպես կոչված «Փիրսի սկզբունքը», ըստ որի իրականությունը նախորդում է ճանաչմանը, մյուս կողմից իրականությունը ծնվում է ճանաչման պրոցեսում, օբյեկտի մասին հասկացությունը ձևավորվում է այն բոլոր *պրակտիկ հետևանքների* արդյունքում, որոնք բխում են այդ օբյեկտի նկատմամբ գործողություններից: Փիրսը եզրակացնում է, որ *նշանակությունը* գործող մտքի պրակտիկ արդյունքն է. որևէ առարկայի նշանակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրա հետ կապված հմտություններ, և կատարյալ իմացության հասնելու ճանապարհին հարկ է մտածել, թե ինչպիսի պրակտիկ նշանակություն կարող է ունենալ մեր ճանաչողության առարկան:

Անալիտիկ փիլիսոփայության XX դարի ամերիկյան դպրոցի ներկայացուցիչ Հ. Փաթնեմը աշխարհի լեզվապատկերի արտաքին «վերաբերության նոր տեսության» ներկայացուցիչներից է, որը մերժեց *նշանակության* երկբաղադրիչ լինելու ավանդական պատկերացումները, ըստ որի այն բաղկացած է *վերաբերյալից*՝ ռեֆերենտից և *բառարանային կամ ընդունված իմաստից*՝ ինտենսիոնալից: Նրա տեսության հիմնական նպատակն էր ցույց տալ, որ միտքը համակարգված կերպով չի որոշում և չի ապահովում լեզվական արտահայտությունների կարևորագույն կարգերի վերաբերությունը, օրինակ՝ բնական տեսակների տերմինները, որոնց նշանակությունը կախված չէ իրենց վերաբերյալից՝ էքստենսիոնալից: Նշանակությունը, նրա պատկերացմամբ, «վեկտոր է»՝ ձևավորված մի քանի բաղադրիչներից, որոնք արտացոլում են տվյալ տերմինի կիրառության զանազան ասպեկտները (շարահյուսական և իմաստաբանական նշույթներ, ստերեոտիպի նկարագրություն ևն): Այն ընդհանուրը, որն առկա է բոլոր կանոնական կիրառություններում, կազմում է նշանակության հարաբերական կայուն «միջուկը», որը ծառայում է պատմական զարգացման ընթացքում լեզվի տարրերի, ինչպես նաև լեզուների մերձեցման՝ *զուգամետության* (կոնվերհենցիայի) միջուկը տվյալ տերմինի

բոլոր պատմականորեն փոփոխվող նշանակությունների համար:

Ըստ էության, լեզվի տրամաբանական վերլուծությունը մշակելիս անալիտիկ փիլիսոփայության ներկայացուցիչները խստորեն սահմանափակում էին *նշյալը* (դենոտատը), նրա անունը և իմաստը, այսինքն՝ առարկան նշանակելու միջոցը: Այսպես, XX դարի ավստրիացի նշանավոր փիլիսոփա Լ. Վիտգենշտեյնը գտնում էր, որ անունները (նշանները), ի տարբերություն նախադասության, օժտված են *նշանակությամբ*, սակայն զուրկ են *իմաստից*: Անուններին բնորոշ չեն զգայորեն ընկալվող որակները. դրանք մաքուր ձևեր են, որոնք ձևավորում են «աշխարհի սուբստանցիան», իսկ «աշխարհը զուտ փաստերի ամբողջություն է»: Հետագայում՝ 20-ական թթ. վերջերին, Վիտգենշտեյնը վերանայեց իր նախորդ դիրքորոշումը՝ փաստելով, որ նշանակությունը բառի միջոցով նշանակված օբյեկտ չէ, այն կարող է նաև հանդես գալ որպես մտածական «պատկեր» մեր գիտակցության մեջ: Միայն որոշակի համատեքստում (լեզվական խաղում) բառերի կիրառությունը և «լեզվաբանական հանրության» կողմից ընդունված համապատասխան կանոններն են հաղորդում նրանց նշանակություն: Հենց այդ խաղի կանոններն են որոշում այդ լեզվական խաղին մասնակից արտահայտությունների նշանակությունը:

Անալիտիկ փիլիսոփայության մեկ այլ նշանավոր ներկայացուցչի՝ XIX-XX դդ. գերմանացի փիլիսոփա Գ. Ֆրեգեի դիտարկմամբ նշանակության և իմաստի միջև առարկայի և նրա բովանդակության նմանությունն ու տարբերությունն են: Որպես օրինակ նա դիտարկում է *«առավոտյան աստղ»* և *«երեկոյան աստղ»* արտահայտությունները: Մի կողմից դրանք նույնական են, մյուս կողմից՝ ոչ: Դրանց նշանակությունները նույնականանում են, երբ պատասխանում ենք «ի՞նչ է նշանակում առավոտյան կամ երեկոյան աստղ» հարցին. այս դեպքում մեզ հետաքրքրում է այդ արտահայտությունները նշանակող միևնույն *առարկան:* Իսկ եթե մեզ հետաքրքրում է նրանց *բովանդակությունը,* այն միջոցը, որով նրանք նշանակում են իրենց առարկաները, ապա նրանց նշանակությունները տարբեր են:

Միանգամայն տարբեր մոտեցում ուներ XX դարի լեհ փիլիսոփա Ա. Շաֆֆը, ըստ որի խոսքային նշանի նշանակությունը, այսինքն՝ բառային նշանակությունն ու հասկացությունը համընկնում են, և որ մարդկային մտածողությունը միշտ հասկացական է և կարող է դրսևորվել միայն լեզվական ձևերով (Шаффф А., 1963):

Շաֆֆը հանգամանորեն քննում է «նշանակության» նշանակությունը և լեզվի հաղորդակցական գործառույթը՝ քննադատելով *նշանակության* վերաբերյալ առկա իդեալիստական և մեխանիստական հայեցակետերը: Նա համամիտ է Ա.Գարդիների այն դրույթին, որ նշանակությունը որոշվում է հետևյալ չորս գործոնների միջոցով՝ խոսողի, լսողի, առարկայի, որի մասին խոսվում է, և բառային նշանի: Բնական հնչյունային լեզուն նա բնորոշում է «....որպես բառային նշանների համակարգ, որոնք ծառայում են մտքերի ձևակերպման համար սուբյեկտիվ իմացության և իրականության մասին այդ մտքերի հասարակական հաղորդակցման ճանապարհով օբյեկտիվ իրականության արտացոլման պրոցեսում, ինչպես նաև նրանց հետ կապված հուզական, գեղագիտական և կամարտահայտման ապրումների հետ» (Шаффф А., 1963): Իսկ *նշանակության* ուսումնասիրության հիմքում նա հարում էր լեզվի մասին մարքսիստական՝ արտացոլման տեսությանը. առանց նշանի՝ չկա նշանակություն և հակառակը: Քննելով նշանակության և իմաստի մասին նախորդ և իր ժամանակի տեսությունները՝ Ա. Շաֆֆը եզրակացնում է. «Նշանակության՝ որպես միջմարդկային որոշակի հարաբերությունների (հույժ կարևոր, իմ կարծիքով, այդ բարդ հիմնախնդրի ճշգրիտ վերլուծության համար) մեկնաբանությունը չի ապահովագրում տերմինի բազմիմաստությունից: Չէ՞ որ ելնելով տեսական այդ նախապայմանից՝ «նշանակության» ներքո կարելի է հասկանալ կա՛մ նշանային իրավիճակում (համակեցության պրոցես) ձևավորված հարաբերություններն ամբողջությամբ, կա՛մ նրանց որևէ հատվածը (նշանի հարաբերությունը առարկային կամ առարկայի մասին մտքին), կա՛մ նշանակյալ, կա՛մ նշանի հիմնանշանակում (այսինքն հաղորդակցության առարկա՝ անկախ նրա գոյության իրական լինելուց կամ իրական գոյություն ունեցող առարկա), կա՛մ նշանի հարաբերությունը նշանների համակարգին (լեզվին), կա՛մ այլ լեզուների նշաններին և այլն» (Шаффф А., 1963):

Նշանակության և իմաստի փիլիսոփայական ըմբռնումների մասին հիմնարար դիտարկումներ ունի XIX դարի երկրորդ և XX դարի առաջին կեսերի գերմանացի նշանավոր փիլիսոփա, ֆենոմենոլոգիայի փիլիսոփայական ուղղության հիմնադիր Է.Գուսերլը: Նա ճշմարտությունը համարում է որպես փաստերում դիտարկվող նշանակությունների իդեալական միասնություն, որոնք չեն վերանում փաստերի հետ

մեկտեղ: Նշանակությունների (իմաստների) ամբողջությունը անվերջանալի է, այն «ճշմարտությունների թագավորություն է», որտեղ կարող է ճշգրտվել իրերի ցանկացած որոշյալություն, ցանկացած առարկայական միասնություն: Նշանակությունն անջատվում է նշանի նյութական-առարկայական էությունից, պատկերացումների կամ ֆանտազիաների կերպարից, և որ գլխավորն է՝ առարկայից: Այն, ինչի մասին խոսվում է, և այն, ինչ խոսվում է (հաստատվում է), նույնական չեն, ինչպես՝ *հավասարանկյուն եռանկյունի* և *հավասարակողմ եռանկյունի* կապակցությունները, որոնք վերաբերում են նույն առարկային, սակայն ունեն տարբեր նշանակություններ: Այս դիտարկումը, ի դեպ, հար և նման է Գ.Ֆրեգեյի «երեկոյան և առավոտյան աստղերի» օրինակին: Փաստորեն, ըստ Գուսերլի, լեզվական արտահայտությունը նույնական չէ նշանակությանը, և նշանը մասնակիորեն կարող է «ծածկել» նշանակությունը, և նշանակության զգացումը հնարավոր է անհատական զգայական կյանքում, հաղորդակցությունից դուրս:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս մեկնաբանել լեզվի նշանային տեսության հիմքում գործառող այն դրույթը, որ լեզվի բառային համակարգի հիմնական տարր հանդիսացող բառը նշան է: Նշանի մասին վերոբերյալ բնորոշումներում սողոսկում է նաև այն դրույթը, որ այն զգայորեն ընկալվող առարկա է, ըստ Վ. Հեգելի՝ «....բուրգ, որտեղ տեղափոխվում և պահպանվում է ինչ-որ մեկի օտար հոգին....այն կեցություն է ուրիշի համար» (Гегель В., 1977), ասել է թե՝ առարկան նշան է միայն այն պարագայում, եթե կարող է ընկալվել որպես նշան: Սա նույնական է ստոիկյան փիլիսոփայության այն դրույթին, որ նշանը միաժամանակ պատկանում է թե՛ զգայական աշխարհին, թե՛ գերզգայականին, այն ընկալականի և հասկացականի միասնություն է: Եվ մարդուն հասցեագրված լեզվական նշան-բառը գերզգայական աշխարհի արտացոլանքն է, ինչպիսին և մարդկային հոգին է: Փաստորեն, նշանակությունը հատկանիշ է, որի հասցեատերը առարկա-նշանն է: Նշանագիտության ռուսական փիլիսոփայական տեսություններում գերակա էր *բառ-նշանի* բաղադրության երկակի լինելու ըմբռնումը՝ հնչյունականը, որն ունի նշանային բնույթ, և մտածական-բովանդակայինը՝ բառի բառային նշանակությունը, որը ոչ թե նշանակում է առարկան, այլ արտացոլում է այն: Փաստորեն, բառը նշանային և ոչ նշանային իր այս հակադրամիասնությամբ նշանակում է առարկան և

«արտահայտում» իր նշանակությունը (Лосев А., 1962): Այս դրույթով, փաստորեն, նշանակությունը դասվում է լեզվական գիտակցության ոլորտին՝ հակառակ Բ.Ռասսելի այն պնդման, որ նշանի նշանակությունը հենց նշանակման առարկան է:

Այս համատեքստում ուշագրավ դիտարկում ունի XX դարի երկրորդ կեսի հայ անվանի փիլիսոփա Լև Աբրահամյանը. «Կարծում եմ՝ «նշանագիտությունն առանց սուբյեկտի» գաղափարն անհիմն է, եթե նկատի է առնվում նշանների ընդհանուր տեսությունը: Անհնար է լիովին հաշվի չառնել, որ նշանը նշանակելիս շատ բան կախված է նրանից, թե ո՛վ ինչպե՛ս է օգտվում նշաններից: Եվ ինչպե՞ս համակերպվել այն պնդմանը, որ, ասենք, «գայլ» բառի նշանակության դերում հանդես է գալիս հենց ինքը այդ կենդանին: Մի՞թե նույն ինքը, որ չափչփում է անտառը: Իսկ մի՞թե մենք իրավունք ունենք մեր տեսադաշտից բաց թողնելու այն հանգամանքը, որ «գայլ» բառի նշանակությունը բնակվում է ոչ թե անտառում, այլ լեզվում» (Абрамян Л., 2001): Եթե նկատեցիք, ասվածը լիակատար արտացոլանքն է մեր հոդվածի սկզբում մեջբերված Լյուիս Քերոլի հեքիաթի հերոսի հարցադրմանը՝ «Հարցն այն է, թե ո՛վ ո՛ւմ պիտի հրամայի (նշանակի – Ա.Մ.)»:

Եթե բառը նշանային միավոր է, ապա նշանակությունը նշանի բաղադրիչ մասն է: Այս համատեքստում լեզվական նշանի ըմբռնումների աստիճանավորման և նրա ոչ լեզվական նշանակության մասին ուշագրավ դիտարկում ունի XX դարի երկրորդ կեսի հայ անվանի փիլիսոփա, լեզվաբան Է. Աթայանը. «Եթե նշան անվանվի միայն հնչյունական, տառային կամ որևէ այլ արտահայտություն, ապա բովանդակություն-նշանակությունը նշանում, բնականաբար, չի ընդգրկվի, իսկ եթե այդ անվանումը տրվի բովանդակության ու արտահայտության միասնությանը, և նշանը հասկացվի իբրև երկկողմ կազմավորում, ապա այն կներառի նաև նշանակությունը (անկախ այն բանից, թե ինչպես է ըմբռնվում վերջինս՝ որպես առարկա, պատկեր, հասկացություն, հարաբերություն, գործառություն և այլն, թե՛ այդ ամենը միասին առնված՝ մի մոտեցում, որը, համենայն դեպս, միակողմանի չէ)» (Աթայան Է., 1981):

Նշանի *երկկողմ* էության կողմնակից է նաև է.Աթայանին ժամանակակից ռուս անվանի լեզվաբան, փիլիսոփա Յու.Ստեպանովը, որն օրինաչափ չի համարում նշանի՝ բառի նկատմամբ միակողմանի մոտեցումը՝ մասնավորապես նշելով, որ «….բառի կազմությունը լեզվում հարաբերությունների մի բարդ համահյուսվածք է

(կոմպլեքս): Նախևառաջ, հնչյունաբանական բառը հանդես է գալիս որպես իմաստի (սիգնիֆիկատի) նշան: Երկրորդ, հնչյունաբանական բառն իր իմաստի (սիգնիֆիկատի) հետ միասին հանդես է գալիս որպես առարկայի (դենոտատի, ռեֆերենտի) նշան: Երրորդ, կոնկրետ ասույթի, խոսքի մեջ ողջ համահյուսվածքը (ամբողջ իմաստաբանական եռանկյունին) կարող է հանդես գալ որպես մի այլ, նոր առարկայի նշան: Այսպիսով, բառի մեջ նշանային հարաբերությունները բազմաստիճան են: Այդ փաստի անտեսումը հանգեցնում է ապարդյուն վեճերի այն մասին, թե արդյոք իմաստը, նշանակությունը նշանի նկատմամբ ինչ-որ արտաքին բա՞ն է, թե՞ մտնում է նշանի մեջ. նշան է միայն հնչյունաբանակա՞ն բառը՝ միակողմանի մի էություն, թե՞ նշանը միշտ երկկողմ էություն է» (Степанов Ю., 1975): Այսպիսով, լեզուն արտալեզվական իրականության արտացոլումն է, աշխարհի նշանային կաղապարավորումը, երբ անորոշ մտածական ոլորտից նշանն արտածում է նշանակվող առարկան՝ այն որոշակիացնելով, դասելով առարկայական կոնկրետ ոլորտի, տվյալ լեզվահամակարգի միջոցներով կատարելով տարբերակումներ:

Տարբերակում են նշանային նշանակության երեք տեսակներ՝ *շարահյուսական, իմաստաբանական* և *գործաբանական*: Շարահյուսական նշանակությունը ենթադրում է նշանների հարացուցային և շարահարական փոխհարաբերությունները լեզվական համակարգի ներսում, իմաստաբանականը գործառում է բառագիտության ոլորտում, իսկ գործաբանական նշանակությունը նշանի և հասցեատիրոջ միջև առկա հարաբերությունն է: Իսկ հարաբերությունն ամեն դեպքում ենթադրում է միջնորդավորվածություն, ուստի գրեթե տարբերություն չկա անվան և նկարագրության միջև, այդպես էլ նշման (դենոտացիայի) և նշանակցման (կոննոտացիայի) միջև: Որովհետև ցանկացած նշանակյալ ի սկզբանե անհատի լեզվամտածողության քմահաճ տիրույթում է:

Այսպիսով, լեզուն ընդամենը այն միջոցն է, որով ինքներս կարողանանք խոսել մեր մասին: Այս համատեքստում միանգամայն իրավացի է XX դարի ֆրանսիացի անվանի փիլիսոփա, նշանագետ Ռ.Բարտը, ըստ որի «….աշխարհի նշանակյալների մասին մեր տեսակետները որոշակիորեն հարաբերված են այն օբյեկտիվ-իրական աշխարհին, որն իր գոյության համար կարիք չունի մեր լեզվի օժանդակությանն ու միջնորդությանը: Ո՛չ ճանաչող սուբյեկտի մտածողությունը, ո՛չ էլ նրա լեզուն չեն

հանդիսանում արտաքին աշխարհի կեցության հիմքը (ratio essendi)» (Барт Р., 1989):

Համակարծիք լինելով Բարտի այս թեզին՝ այնուամենայնիվ, լեզվաբանական իմաստաբանության հիմնախնդիրը եղել և մնում է *լեզվի միջոցով աշխարհի հասկացութավորումը*՝ իր բառային, քերականական և այլ նշան-համակարգերի միջոցով վեր հանելու՝ ինչպե՛ս է լեզուն հատվածավորում աշխարհը և ինչպե՛ս է այն պատկերացնում, այլկերպ՝ ստեղծում *աշխարհի լեզվապատկերը,* որը նրա հայելային արտացոլանքը չէ: Աշխարհաճանաչման՝ իմացության պրոցեսում լեզվի միջոցով վերարտադրվում է ոչ միայն իրականության մտապատկերը, այլև լեզուն ներմուծում է որոշ ճշգրտումներ այդ իրականության ընկալման մեջ: «Որպես այս ամենի արդյունք՝ մեր գիտակցության մեջ կազմավորվում է ոչ միայն մտքերի մի որոշակի համակարգ՝ աշխարհի տրամաբանական պատկերը, այլև ինչ-որ հարակից պատկեր (ընդգծումը մերն է – Ա.Մ.)՝ աշխարհի լեզվական պատկերը, որը ոչ միշտ է համապատասխանում աշխարհի տրամաբանական պատկերին, ուղեկցում է նրան՝ պահպանելով իր հարաբերական ինքնուրույնությունը: Աշխարհի այդ լեզվական պատկերը մեզ շրջապատող իրականության բառային իմաստավորումն է (ընդգծումը մերն է – Ա.Մ.), լեզվական արտահայտումը և այս կամ այն չափով լեզվից լեզու տարբերվում է» (Բրուտյան Գ., 1972): Ասվածից կարելի է եզրակացնել, որ աշխարհի լեզվական պատկերը օբյեկտիվ իրականության հայելային արտացոլանքը չէ. այն հարաբերականորեն անկախ ռեալություն է, որի փաստական ապացույցը լեզվից լեզու՝ անհատից անհատ՝ խոսքից խոսք այդ ռեալի պատկերման բազմազանությունն է, բայց ոչ երբեք՝ տարբերությունը: Այս բազմազանությունն է հենց աշխարհի վերոնշյալ հարակից պատկերի հիմքում՝ պայմանավորված տվյալ լեզվին բնորոշ օրենքներով, իր հարաբերական ինքնուրույնությունը պահպանելու ունակությամբ: «Լեզուների բազմազանության միջոցով մեր առջև բացահայտվում է աշխարհի հարստությունը և այն բազմակերպությունը, որը մենք ճանաչում ենք նրա մեջ. և մարդկային կեցությունը մեզ ներկայանում է ավելի ընդլայնված, քանի որ լեզուները հստակ և իրական գծերով մեզ հրամցնում են մտածողության և ընկալման զանազան միջոցներ», - ասում էր Հումբոլդտը (Гумбольдт В., 1985): Իսկ կիրառական լեզվաբանության հայազգի անվանի լեզվաբան Ս.Տեր-Մինասովան նշում էր. «Տարբեր ժողովուրդների մոտ տարբեր է իրական աշխարհից դեպի

հասկացություն և այնուհետև դեպի բառային արտահայտում տանող ուղին, ինչը պայմանավորված է այդ ժողովուրդների պատմության, աշխարհագրության տարբերություններով, կենսակերպի առանձնահատկություններով և, համապատասխանաբար, նրանց հանրային գիտակցության զարգացման տարբերություններով: ....լեզուն իրականությունն արտացոլում է ոչ թե ուղիղ, այլ երկու զիգզագների միջով. իրական աշխարհից դեպի մտածողություն և մտածողությունից դեպի լեզու» (Тер-Минасова С., 2000): Ասվածի համատեքստում ուշագրավ են լեզվաբանական փիլիսոփայության գիտակարգի որոշ ներկայացուցիչների դիտարկումները XX դարի առաջին կեսի նշանավոր ամերիկյան լեզվաբան, ամերիկյան հնդկացիների լեզուների մասնագետ, այսպես կոչված, *լեզվաբանական հարաբերականության* վարկածի (Սեպիր-Ուորֆի վարկած) հեղինակի՝ Բենջամին Ուորֆի (Whorf B., 1950) դրույթների վերաբերյալ: Ըստ այդ վարկածի՝ բառի իմաստային կառուցվածքի, նրա նշանակության ձևավորման վրա որոշ դեպքերում առկա է տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների ազդեցությունը. լեզվի քերականական ձևերը մոդելավորում են իրական աշխարհը և բառաստեղծման փորձի տեսանկյունից վերափոխում այն: Ուորֆի կարծիքով՝ լեզվական համակարգերի նմանության կամ գոնե հարաբերակցության դեպքում է միայն հնարավոր ստեղծել Տիեզերքի համապատասխան ֆիզիկական երևույթների պատկերը՝ մերժելով այն իրողությունը, որ լեզուների տարբերությունը պայմանավորված է դրանցով հաղորդակցվող հանրույթի մտածողության բնույթով (Whorf B., 1950): Յուրաքանչյուր լեզու ձևավորում է իր ուրույն հայացքը՝ աշխարհայացքը աշխարհի բազում, այսպես կոչված, հասկացական գույների նկատմամբ: Հարցն այն է, թե որչա՛փ է տվյալ լեզվակրի ազդեցությունը լեզվի և մտածողության փոխհարաբերությունների տիրույթում: Այսպես, XX դարի երկրորդ կեսի ռուս անվանի լեզվաբան Վ. Զվեգինցևն այս առումով, մասնավորապես, նշում է, որ առաջնորդվելով Սեպիր-Ուորֆի վարկածով՝ ստիպված ենք անխուսափելիորեն ընդունել հասկացական աշխարհի վրա ազգային առանձնահատկությունների առկայությունը՝ կախված տվյալ լեզվի կառուցվածքից, որն իր ազդեցությունն է թողնում աշխարհի իմացության բուն պրոցեսի վրա (Звегинцев,1962): Ուորֆի վարկածի համաձայն՝ միայն լեզվական համակարգերի նմանության կամ գոնե

հարաբերակցության դեպքում միանման ֆիզիկական երևույթները հնարավորություն կտան ստեղծելու Տիեզերքի միանման պատկեր: Այս դրույթը «....մեր կողմից վերառվում է լեզվաբանական լրացուցչության սկզբունքով, - նշում է Գ.Բրուտյանը՝ հավելելով. «Իմացության պրոցեսում լեզվի գործուն դերի հետ կապված և նրա յուրահատկությունների շնորհիվ՝ առաջանում է աշխարհի լեզվական պատկերը: Ամբողջության մեջ և հիմնականում այն համընկնում է մարդկանց գիտակցության մեջ տրամաբանական արտացոլմանը: Միևնույն ժամանակ, աշխարհի լեզվական պատկերի մեջ պահպանվում են ծայրամասային տեղամասեր, որոնք դուրս են մնում տրամաբանական արտացոլման սահմաններից ու որպես իրերի բառային պատկերներ և նրանց միջև եղած հարաբերությունների լեզվական մոդելներ տարբերվում են լեզվից լեզու՝ կախված վերջիններիս յուրահատկություններից: Բառային պատկերների և լեզվական մոդելների միջոցով տեղի է ունենում աշխարհի լրացուցիչ դիտում....»: Այս առումով երիցս ճշմարիտ էր XIX դարի ռուս նշանավոր լեզվաբան Ն.Կրուշևսկին, երբ նշում էր, որ յուրաքանչյուր լեզու իր զարգացման ճանապարհին ձգտում է առավել «....ամբողջական համապատասխանություն հաստատել բառաշխարհի և հասկացական աշխարհի միջև» (Крушевский Н., 1993): Փաստորեն, չի կարող լիակատար համապատասխանություն լինել բառաշխարհի և Տիեզերքի «տեղեկույթի» միջև: Այդ «տեղեկույթը» զգայորեն և առարկայորեն արտապատկերվում է մեր գիտակցության մեջ՝ ձևավորելով բառաշխարհի և մտային աշխարհի համընկնում, «....իսկ այնտեղ, ուր չկա համընկնում, լրացնում է Տիեզերքի պատկերի տրամաբանական արտապատկերումը»: Սակայն հասկացական դաշտը ամբողջովին չի «լցնում» բառի իմաստային կառուցվածքը: Այդ կառուցվածքում լեզվի պատմական տարբեր գոյավիճակներում ընթանում են աստիճանակարգային փոխատեղումներ՝ բառի միջուկային և նրա ծայրամասային իմաստների կամ նշանակությունների միջև:

Նկարագրական լեզվաբանության մեջ իմաստային նվազագույն միավորը անվանում են իմաստույթ՝ (սեմա), ձևույթային մակարդակում՝ իմույթ (սեմեմա): Իմաստույթը բառի հասկացական միջուկն է՝ գերիմաստույթը (архисема) կամ տրամաբանական նշանակությունը, այլկերպ՝ բառի *բառարանային իմաստի* կամ *նշանակության* 1-ին՝ գլխավոր իմաստը, անփոփոխակը, բառի մնացած՝ հարակից նշանակությունները

բառային տարբերակներ են, բուն լեզվական նշանակությունը: Ընդ որում, բառի միջուկային իմաստույթը համընդհանուր է՝ համազգային, իսկ ծայրամասայինները՝ բուն լեզվականը՝ ազգային: Վերջինս, կախված տվյալ լեզվի համակարգային առանձնահատկություններից, լեզվից լեզու տարբեր է, այն տարբեր է անգամ տվյալ լեզվի զարգացման առանձին գոյավիճակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհի լեզվական պատկերի ստեղծմանը մասնակից են միտքը, որն աշխարհի առարկայական արտացոլանքն է, տրամաբանական տեղեկույթը, և լեզուն, որն իր միավորների (բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ևն) միջոցով ձևավորում է իմաստային շապիկ՝ ընդգրկելով այդ տեղեկույթի հասկացական միջուկը: Աշխարհընկալման այս երկու բաղադրիչները՝ տրամաբանական (հասկացական) և լեզվական պատկերները, հիմնականում համընկնում են:
2. Լեզվականը հանդես է գալիս բառային նշանակության տեսքով՝ կրելով տվյալ ժողովրդի պատմական լեզվավիճակի մշտական ազդեցությունը, մինչդեռ տրամաբանականը՝ հասկացականը, նշանակության անփոփոխակն է՝ ինվարիանտը:
3. *Նշան, նշանակություն, իմաստ* հարաբերակցությունը ստացել է տարբեր մեկնաբանություններ: Մի դեպքում *նշանակությունը* համարել են գործող մտքի *պրակտիկ արդյունք* (Փիրս), մյուս դեպքում մերժելով նրա երկբաղադրիչ բնույթը՝ այն բնութագրել են որպես *վերաբերյալի* և *բառարանային իմաստի բաղկացություն* (Փաթնեմ) կամ՝ *մտածական «պատկեր»* մեր գիտակցության մեջ, որը բառի միջոցով նշանակված օբյեկտ չէ. միայն «լեզվական խաղում»՝ համատեքստում է դրանց հաղորդվում նշանակություն (Վիտգենշտեյն), կամ՝ նշանակության և իմաստի միջև *առարկայի* և *նրա բովանդակության նմանություն ու տարբերություն*, որոնք մի կողմից նույնական են, մյուս կողմից՝ ոչ (Ֆրեգե), որոշներ էլ՝ *առանց նշանի՝ չկա նշանակություն*, և՝ հակառակը (Շաֆֆ), կամ որ՝ *նշանակությունը* որոշվում է չորս գործոնների միջոցով՝ *խոսողի, լսողի, առարկայի*, որի մասին խոսվում է, և *բառային նշանի* (Գարդիներ), կամ՝ *նշանը* մասնակիորեն կարող է «ծածկել» *նշանակությունը*, և նշանակության զգացումը հնարավոր է անհատական զգայական կյանքում, հաղորդակցությունից դուրս (Գուսերլի), կամ՝ առարկան *նշան* է միայն այն պարագայում, եթե կարող է ընկալվել որպես *նշան*, այն ընկալականի և հասկացականի միասնություն է (Հեգել), և որ բառը նշանային և ոչ նշանային իր այս հակադրամիասնությամբ

նշանակում է առարկան և «արտահայտում» իր *նշանակությունը* (Լոսև), և որ նշանակությունը հենց *նշանակման առարկան է* (Ռասսել), պարզապես *նշանը* նշանակելիս շատ բան կախված է նրանից, թե *ո՛վ ինչպե՛ս է օգտվում նշաններից* (Լ.Աբրահամյան) և այլն:

4. Փաստորեն, չի կարող լիակատար համապատասխանություն լինել բառաշխարհի և Տիեզերքի «տեղեկույթի»՝ հասկացական աշխարհի միջև, իսկ այնտեղ, ուր չկա համընկնում, լրացնում է (*լեզվաբանական լրացչության* սկզբունք) Տիեզերքի պատկերի տրամաբանական արտապատկերումը (Բրուտյան):
5. Լեզվի պատմական տարբեր գոյավիճակներում բառի իմաստային կառուցվածքում ընթանում են աստիճանակարգային փոխատեղումներ՝ նրա միջուկային և ծայրամասային իմաստների կամ նշանակությունների միջև: Բառի միջուկային իմաստույթը համընդհանուր է՝ համազգային, իսկ ծայրամասայինները՝ բուն լեզվականը՝ ազգային, որը տարբեր է ոչ միայն լեզուներում, այլև տվյալ լեզվի զարգացման առանձին գոյավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բրուտյան Գ. (1972). *Փիլիսոփայություն և լեզու.* Երևան: Հայաստան.

Աթայան Է. (1981). *Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը,*Երևան: ԵՊՀ.

Абрамян Л. А. (1965). *Гносеологические проблемы теории знаков,* Ереван: АН АЦЦР.

Абрамян, Л. А. (2001). О философских проблемах знаковой теории языка. *Բանբեր Երևանի Համալսարանի, 3*(105), 37–45.

Барт, Р. (1989). *Семиотика. Поэтика.* М.: Прогресс.

Булич, С. К. (1890). *Упанишады. Энциклопедический словарь Брокгауза и Ефрона.* СПб.

Гегель В. (1977). *Энциклопедия филосовских наук,: Vol. т. 3,*. Москва: Мысль.

Гумбольдт, В. Ф. о. н. (1985). *Язык и философия культуры,* Москва: Прогресс.

Звегинцев, В. А. (1962). *Очерки по общему языкознанию.* Москва: МГУ.

Крушевский, Н. В. (1993). *Очерк науки о языке.* Казань: РГАУ.

Лосев, А. Ф. (1962). *Знак. Символ. Миф,* Москва: МГУ.

Степанов, Ю. С. (1975). *Основы общего языкознания.* Москва: Просвещение.

Тер-Минасова, С. Г. (2000). *Язык и межкультурная коммуникация.* Москва: Слово.

Шафф, А. (1963). *Введение в семантику,* Москва: Иност. лит.

Whorf, B. L. (1950). An American Indian Model of the Universe. *International Journal of American Linguistics,* 16(2). 67-72

REFERENCE LIST

Brutyan G. (1972). Filosofiya i yazyk. *(Philosophy and language).* Erevan. Armeniya:

Atayan E. (1981). Vnutrennee obrazovanie i vneshnee otnoshenie yazykovogo mira. *(Internal education and external attitude of the linguistic world).* Erevan: EGU:

Abramyan L. A. (1965). Gnoseologicheskie problemy teorii znakov *(Gnoseological problems of the theory of signs),* Erevan: AN ACCR.

Abramyan, L. A. (2001). O filosofskih problemah znakovoj teorii yazyka. *(On the philosophical problems of the sign theory of language).* Բանբեր Երևանի Համալսարանի, 3(105), 37–45.

Bart, R. (1989). Semiotika. Poetika. *(Semiotics. Poetics).* Moskva: Progress.

Bulich, S. K. (1890). Upanishady. *(Upanishads).* Enciklopedicheskij slovar' Brokgauza i Efrona. SPb.

Gegel' V. (1977). Enciklopediya filosovskih nauk *(Encyclopedia of Philosophical Sciences),* Vol. t. 3,. Moskva: Mysl'.

Gumbol'dt, V. F. o. n. (1985). YAzyk i filosofiya kul'tury *(Language and philosophy of culture).* Moskva: Progress.

Zvegincev, V. A. (1962). Ocherki po obshchemu yazykoznaniyu. *(Essays on general linguistics).* Moskva: MGU.

Krushevskij, N. V. (1993). Ocherk nauki o yazyke. *(Essay on the science of language).* Kazan': RGAU.

Losev, A. F. (1962). Znak. Simvol. Mif. *(Sign. Symbol. Myth).* Moskva: MGU.

Stepanov, YU. S. (1975). Osnovy obshchego yazykoznaniya. *(Fundamentals of general linguistics).* Moskva: Prosveshchenie.

Ter-Minasova, S. G. (2000). YAzyk i mezhkul'turnaya kommunikaciya. *(Language and intercultural communication).* Moskva: Slovo.

SHaff, A. (1963). Vvedenie v semantiku. *(Introduction to semantics).* Moskva: Inost. lit.

Whorf, B. L. (1950). An American Indian Model of the Universe. *(An American Indian Model of the Universe).* International Journal of American Linguistics, 16(2). 67-72.

РЕЗЮМЕ

О ЛИНГВОФИЛОСОФСКИХ ВОСПРИЯТИЯХ ЛЕКСИЧЕСКОГО ЗНАКА, ЗНАЧЕНИЯ, СМЫСЛА И ЯЗЫКОВАЯ КАРТИНА МИРА

АРТАШЕС МАРТИРОСЯН

В статье рассматриваются постановки вопросов, касающихся отражения языковой картины мира, которые издавна волновали философов: какое соотношение, "соучастие" существует между *словом* и *значением*? какова их "степень независимости"? слово помогает формированию мыслей или значение? что из них превалирует? существуют ли другие значимые компоненты в формировании языковой картины мира? В контексте этих вопросов максимально емко представлены положения ведущих мировых лингво-философских течений в разные периоды истории относительно взаимодополняющей роли словесного знака, значения и смысла в процессе создания языковой картины мира. Ценность вопроса сводится к постановке вопроса о том, что если *значение* постоянна во всех языках и слово является носителем определенной информации, то каков характер возникновения инвариантов в формировании значения слова для одного и того же понятие от языка к языку, связанное с мировозрением данной языковой общности? Может быть, это различие связано с реальностью моделирования мира, то есть внеязыковой реальности, по-разному языковым сообществом, а может быть, как утверждали материалисты, значение есть эмоциональное отражение обьективной реальности различных пластов сознания, а может быть, это и есть истинное рождение сознания, как утверждали идеалисты? Однако проблемой лингвистической семантики была и остается концептуализация мира через язык-через слово-знак, ядерные семы которого всеобщие- общенациональные, а периферийные – собственно языковые, национальные.

Ключевые слова: знак, значение, смысл, языковая картина мира, внеязыковая реалия, интенсионал, экстенсиональное значение, денотация, коннотация, инвариант, смежная картина мира.

ABSTRACT

LINGUA-PHILOSOPHICAL PERCEPTIONS OF A LINGUISTIC SIGN, SIGNIFICATION, MEANING AND THE LINGUISTIC PICTURE OF THE WORLD

ARTASHES MARTIROSYAN

The article discusses the questions raised in correlation with the reflection of the linguistic picture of the world and still causing philosophical concerns: What is the ratio? Is it "complicity" that exists between a word and its meaning? What is their "degree of independence"? Does the word help to form thoughts or meaning? Which of them prevails? Are there other significant components in forming the linguistic picture of the world? In the context of these issues, the provisions of the world's leading lingua-philosophical streams in different periods of history regarding the complementary role of verbal sign, meaning and sense in the process of creating the linguistic picture of the world are presented. If the meaning is constant in all languages and the word is a carrier of certain information, what is the nature of invariants in the formation of the meaning of the word given for the same concept in different languages, associated with worldview of this linguistic community? Maybe this difference is connected with the reality of modelling the world.

However, the conceptualization of the world through the language, sign is universal and nationwide, while the peripheral ones are linguistic and national, still remains pendent in linguistic semantics.

Keywords: sign, signification, meaning, linguistic picture of the world, extra-linguistic reality, intensional, extensional meaning, denotation, connotation, invariant, adjacent picture of the world.

Հոդվածը ստացվել է՝ 15.04.2022 :

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 04.05.2022:

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 27. 06.2022: